

Հայ-ռուսական 5-րդ համաժողովի հարգարժան մասնակիցներ

Հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամությունը, որ դարերի պատմություն ունի, մեր օրերում ձեռք է բերել նոր բովանդակություն եւ առանձնահատուկ նշանակություն: Այսօր, աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում մեր հարաբերությունները շարունակում են մնալ ջերմ եւ կառուցողական: Ոչ հեռավոր անցյալում մեր ժողովուրդները միասին կերտել են մեր ընդհանուր հայրենիքը եւ համատեղ ընտանիքում մերձեցրել մեր մշակույթները:

Հայաստանի անկախացումից հետո կնքված ռուս-հայկական ռազմաքաղաքական դաշինքը, Հայաստանի անդամակցությունը ԱՊՀ երկրներին եւ Հավաքական անվտանգության կոլեկտիվ պայմանագրին, Մաքսային ու Եվրասիական Տնտեսական Միություններին փաստում են, որ էլ ավելի են մեկտեղվել մեր պետությունների ռազմաքաղաքական ու տնտեսական ընդհանուր շահերը, մեր ժողովուրդների բարեկամական դարավոր կապերը, որոնք այս պահին գտնվում են ամենաբարձր մակարդակներում: Այսօր Երեւանում կայացած Հավաքական անվտանգության կոլեկտիվ պայմանագրի անդամ երկրների նիստը եւս խոսում է մեր երկրների ռազմաքաղաքական դաշինքի հետագա ամրապնդման, ահաբեկչության եւ ընդհանուր արտաքին սպառնալիքներին դիմակայելու անհրաժեշտության մասին: Սակայն նույն գնահատականը դժվար է տալ մեր երկու

հանրապետությունների առանձին վարչական միավորների համագործակցության մասով, քանի որ նրանց ներուժը եւ հնարավորությունները դեռեւս լիարժեք չեն օգտագործվում: Նախկինում, 2009 թվականին, Գեղարքունիքի եւ Օմսկի վարչական միավորների միջեւ տեղի են ունեցել աշխատանքային շփումներ ու քննարկումներ, որոնք ինչ-որ տեղ նպաստել են նաեւ Գեղարքունիք-Օմսկ վարչական միավորների համագործակցության հուշագրի ստորագրմանը: Երեկ մենք Օմսկի նահանգապետ պարոն Նազարովի հետ մեր մարզում մանրամասնորեն քննարկել ենք համագործակցության հուշագրի բոլոր կետերը, որոնք վերաբերում են առեւտրատնտեսական, գիտատեխնիկական եւ հասարակական ոլորտների զարգացմանը: Մեր անմիջական ու ջերմ հանդիպումը, բաց ու մանրակրկիտ քննարկումները մեզ հույս են ներշնչում, որ մեր կողմից ստորագրված հուշագիրը կտա իր սպասելի արդյունքները, իսկ մեր համագործակցությունը մեծապես կնպաստի հայ-ռուսական քաղաքական ու տնտեսական, կրթական ու մշակութային հետագա կապերի զարգացմանն ու ամրապնդմանը: Իսկ դրա համար մենք ոչ միայն ձեւավորված ավանդներ ունենք, այլ նաեւ՝ համապատասխան ներուժ եւ նախադրյալներ: